Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար
պարոն Գ. Գուլյանին

**Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**
**ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

1. ***Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը.***
   Մերի Հարությունյան

2. ***Զբաղեցրած պաշտոնը.***
   Ռազմավարական քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ

3. ***Գործուղման վայրը և ժամկետները***
   Այցելություն Ֆրանսիայի Հանրապետության Փարիզ քաղաք՝ 2023թ. մայիսի 28-ից հունիսի 2-ը:

4. ***Հրավիրող կողմը***
   ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագիր

5. ***Գործուղման նպատակը***
   Մասնակցություն պլաստիկ աղտոտման վերաբերյալ միջազգային իրավաբանորեն պարտադիր գործիք մշակելու նպատակով ձևավորված միջկառավարական բանակցային կոմիտեի երկրորդ նիստին:

6. ***Քննարկված թեմաները, ելույթները և հանդիպումները***

2023 թվականի մայիսի 28-ից հունիսի 2-ը տեղի ունեցած պլաստիկ աղտոտման վերաբերյալ միջազգային իրավաբանորեն պարտադիր գործիք մշակելու նպատակով ձևավորված միջկառավարական բանակցային կոմիտեի երկրորդ նիստի շրջանակներում քննարկվեցին հետևյալ հիմնական հարցերը.

- **պլաստիկ աղտոտման վերաբերյալ միջազգային իրավաբանորեն պարտադիր գործիք մշակելու նպատակով ձևավորված միջկառավարական**

**բանակցային կոմիտեի /այսուհետ՝ ՄԲԿ/ բյուրոյի ընտրություններ և կազմի հաստատում**: *Օրակարգի փվյալ կետի շրջանակներում տեղի ունեցան Արևելյան Եվրոպայի տարածաշրջանային խմբից բյուրոի անդամների ընտրությունները, որի արդյունքում ընտրվեցին Իրմա Գուրգուլիանին (Վրաստան) և Կաուպո Հեյնմանը (Էստոնիա): Տեղի ունեցավ նաև Բյուրոյի կազմի հաստատում հետևյալ կերպ՝ Աֆրիկյան պետություններ՝ Ջուլիետ Կաբերա (Ռուանդա) և Չեյխ Նդիայե Սիլլա(Սենեգալ), Ասիա-խաղաղօվկիանոսյան երկրներ՝ Հիրոշի Օնոն (Ճապոնիա) և Մոհամմադ Ալ Խաշաշնեն (Հորդանան), Արևելյան Եվրոպայի երկրներ՝ Իրմա Գուրգուլիանի (Վրաստան), Կաուպո Հեյնմա(Էստոնիա), Լատինական Ամերիկայի և Կարիբյան ավազանի երկրներր՝ Լուիս Վայաս Վալդիվիեսո (Էկվադոր), Արևմտյան Եվրոպայի և այլ պետություններ՝ Յոհաննա Լիսինգեր-Պեյց (Շվեդիա) և Լարկ Ուիլյամս (Ամերիկայի Միացյալ Նահանգներ), Փոքր կղզիների զարգացող պետություններ՝ Աշա Չելենջերի (Անտիգուա և Բարբուդա), վերջինս ընտրվեց Բյուրոյի քարտուղար:*

- **ՄԲԿ կանոնների և ընթացակարգերի հաստատում**: *Օրակարգի փվյալ կետի շրջանակներում տեղի ունեցան մի շարք քննարկումներ՝ ՄԲԿ կանոնների և ընթացակարգերի մասին նախագծային փաստաթղթի շուրջ, մասնավորապես ՄԲԿ անդամ երկրների կողմից քննարկվում էին նախագծի 37-րդ և 38-րդ կետերը, որոնք վերաբերում են ՄԲԿ կողմից որոշումների ընդունման ընթացակարգին, քանի որ կետերի վերաբերյալ միասնական դիրքորոշում չձևավորվեց նախագծի հետագա քննարկումը և հաստատումը տեղափոխվեց ՄԲԿ 3-րդ հանդիպման օրակարգ:*

- **Ելույթների ներկայացում**: *Օրակարգի փվյալ կետի շրջանակներում՝ խնդրո առարկայի վերաբերյալ ելույթներ ունեցան մի շարք երկրների պատվիրակներ/այդ թվում նաև Հայաստանը/, տարածաշրջանային միավորներ, մասնավոր հատվածի և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:*

- **պլաստիկ աղտոտման վերաբերյալ միջազգային իրավաբանորեն պարտադիր գործիքի հնարավոր ենթաբաժինների քննարկում՝ կոնտակտային խմբերում:** *Օրակարգի փվյալ կետի շրջանակներում երկու*

*զուգահեռ խմբերում տեղի են ունեցել մի շարք քննարկումներ /քննարկումներին ցուցաբերել եմ ակտիվ մասնակցություն/ հետևյալ կետերի վերաբերյալ.*

1) ենթաբաժինների բովանդակություններ (հիմնական պարտավորություններ, հսկման մեխանիզմներ և կամավոր մոտեցումներ),

2) ապագա համաձայնագրի հնարավոր նպատակների ուրվագծում (այդ թվում՝ պլաստիկ աղտոտման նվազեցում, մարդու առողջության և շրջակա միջավայրը պլաստիկ աղտոտման անբարենպաստ հետևանքներից պաշտպանություն ՝ պլաստիկի կյանքի ամբողջ ցիկլի ընթացքում, պլաստիկի արտադրության կրճատում, օգտագործում և հեռացում այդ թվում՝ խթանելով շրջանաձև տնտեսությունը և այլն),

3) հիմնական պարտավորությունների տարբերակների քննարկում (այդ թվում պլաստիկ արտադրանքի առաջարկի, պահանջարկի և օգտագործման աստիճանական հեռացում և/կամ կրճատում, միկրոպլաստիկի նվազեցում, թափոնների կառավարման ամրապնդում, շրջանաձև տնտեսության խթանում, պլաստիկ արտադրանքի և փաթեթավորման կրճատման, վերաօգտագործման և վերանորոգման խրախուսում, առկա պլաստիկ աղտոտվածության դեմ պայքար և այլն),

4) Տեղեկատվության փոխանակում (լավագույն փորձի և հասանելի տեխնոլոգիաների մասին տեղեկատվության փոխանակում, տեղեկատվության փոխանակում կայուն սպառման և արտադրության վերաբերյալ, ինչպես նաև թափոնների անվտանգ կառավարման վերաբերյալ),

5) ֆինանսական և տեխնիկական աջակցություն (կարողությունների զարգացման նպատակով ֆինանսական և տեխնիկական օժանդակության տրամադրման մեխանիզմների ուրվագծում, պայմանագրային պարտավորությունների այդ թվում՝ ենթակառուցվածքների զարգացման, նոր տեխնոլոգիաների, մոնիտորինգի և հաշվետվության համակարգերի ներդրման

նպատակով ֆինանսական և տեխնիկական օժանդակության տրամադրման մեխանիզմների ուրվագծում),

6) հետազոտությունների և վերլուծությունների իրականացում (սպառման, արտադրության, նյութական հոսքերի մասին վերլուծություններ, տնտեսական և սոցիալ-տնտեսական հետևանքների վերլուծություններ, պլաստիկ թափոնների անդրսահմանային տեղաշարժերի հետևանքների վերլուծություն),

Հանդիպմանը մասնակցում էին 2000-ից ավել մասնակիցներ՝ 150-ից ավել երկրներից, միջազգային կառույցներից, մասնավոր սեկտորից:

7. ***<u>Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը</u>***

Հանդիպման շրջանակներում որոշում ընդունվեց, որ գործընթացի քարտուղարության կողմից կմշակվի պլաստիկ աղտոտման վերաբերյալ միջազգային իրավաբանորեն պարտադիր գործիքի զրոյական նախագիծը, որը նախապես կուղարկվի ՄԲԿ ներկայացուցիչների քննարկմանը, որոշում ընդունվեց նաև ՄԲԿ 3-րդ հանդիպումը ս/թ հոկտեմբերին Նայրոբի քաղաքում կազմակերպելու վերաբերյալ:

Ռազմավարական քաղաքականության վարչության
գլխավոր մասնագետ՝



Մ. Հարությունյան

07.06.2023թ.